



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2017թ մարտի 20

N 78 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
<<ԹԱԼԻՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ >>, <<ԱՊԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>, <<ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ>>, << ԱՇՏԱՐԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, << ԱՐՏԵՆԻԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ >> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները

Կարգադրում եմ՝

1. 2017 թվականի ներքին աուդիտի բաժնի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Թալինի բժշկական կենտրոն>>, <<Ապարանի բժշկական կենտրոն>>, <<Ծաղկահովիտի բժշկական կենտրոն>>, <<Աշտարակի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություններում և <<Արտենիի առողջության կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում անցկացնել 2016 թվականի ֆինանսական աուդիտ բաժնի պետ Սարգիս Մուրադյանի, բաժնի գլխավոր մասնագետներ Սիրան Ասատրյանի, Ենոք Մինասյանի և Արթուր Կարապետյանի կողմից, աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ փակ բաժնետիրական ընկերությունների և պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեններին և հաշվապահներին :

2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 28 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2017 թվականի մարտի 21-ից ավարտել ապրիլի 28-ին:

Գ. ԳՅՈՂԱԼՅԱՆ